

Մմբաս Բիւրաս  
Կմբագրութիւն «Փիիհնիկ», Ի  
Աղեփասնորիա



S. Burat  
Rédaction «PUNIG»  
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ղրւ.  
ՏԱՐԵԿԱՆ... 45  
ՎԵՅԱՄՍԵԱՅ 25

Տր.  
ՏԱՐԵԿԱՆ... 15  
ՎԵՅԱՄՍԵԱՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ  
ԿԱՆՆԻԿ Է  
Ձեռագիր ետ-Ղրւար-  
նուիր

# Փ Ի Ի Կ Ն Ի Կ

Կը ծախուի ՄԷԿ դրուե ողջի

ԿՈՎԿԱՍ  
ՏՆԵԿԱՆ ԲԱՂ. 4  
Ազգեր կ'ընդուն-  
ուին մասնաւոր  
պայմաններով.

ՇԱԲԱՐԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

2 ՅՈՒՂԻՍ 1902

Թիի 3

## ԲԱՅԱԿԱՅ ԵՒ

### ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ՆԵՐԿԱՅ

Տիար Լևոն Մկրտիչեան, էքսքէր-  
Սէնտիք սնանկացեալ բարոյականներու  
և վարկաբեկ խնամակալներու, մեկ-  
ներ է Եւրոպա Մելքոնեանի մը հետ  
որուն շուքը ազնիւ է եղեր, ինչպէս  
իմաց կուտայ մեզ «Արշալոյս»ի ցաւա-  
գար ու անկարելի տիրացուն:

Տիար Լևոն Մկրտիչեան, էքսքէր-  
Սէնտիք ու միանգամայն աներևոյթ  
խմբագրապետ ապուշներու պաշտօ-  
նական օւկանին, չէ ուզած որ իր  
բացակայութեան ատեն «Արշալոյս»ի  
անձնուրաց ընթերցողները զրկուին իր  
արձակէն:

Եւ մինչ Եղիշէներու ամենէն Թո-  
րոսեանը այդ անհարկի մեկնումէն  
այրիացած՝ Մկրտիչեանի բէշերուն մէջ  
թափած է իր տաք տաք արցունքնե-  
րը, էքսքէր-Սէնտիքը «մի՛ լար, Եղիշէ»,  
ըսած է. ես կ'երթամ բայց յօղուած  
ներս քեզ կը ձգեմ:»

Ահա՛ թէ ինչպէս երբ շարաթ օր  
չողենաւը Մկրտիչեանն ու իր փառքը  
կը տանէր Բոր-Մայիտի ճամբով, Ար-  
շալոյս կը հրատարակէր երեք սիւ-  
նակ յօղուած մը որ երեք մզոն ան-  
զինէն Մկրտիչեան կը հոտէր:

«Յա՛ջորդական ուրիշ երկու յօղ-  
ուածներով ցոյց պիտի տանք», կ'ըսէ  
Արշալոյս, որ Մկրտիչեան՝ ո՛չ թէ Եւ-  
րոպա, այլ Գժոխք ալ երթայ, նորէն  
իր յօղուածները անպակաս պիտի ընէ  
մեր գլխէն:

Ալէքսանդրիայի ազգային ապօրէն  
Թաղական Խորհուրդին ու խնամակա-  
լութեան սնանկութեան էքսքէր-Սէն-  
տիքը իր այս առաջին յօղուածով կը  
ջանայ ձողկել ամէն անոնք որոնք  
օրէնքի գործադրութիւնը պահանջե-  
լու համար հրապարակ իջած են: Ա-  
մէն ազնիւ ու անշահախնդիր ձգտում  
ըմբռնելու անկարող, կը կարծէ որ  
ամէն մարդ հասարակ Թորոսեանի մը  
կամ Մկրտիչեանի մը պէս միայն անձ-  
նական հաշիւներէ դրդեալ պէտք է  
անպատճառ ազգային դործերու մի-  
ջամտէ ու ասիկա ապացուցանելու

համար չվարանիր երբեմն ստելու, յաճախ խեղաթիւրելու և միշտ անուանարկելու : Այս ամէնքը կը ներենք իրեն գիտնալով որ իժերը միշտ պիտի խայթեն ու խողելը աղտոտութիւններու մէջ պիտի փնտռեն իրենց անունդը : Ինչ որ չենք ներեր իրեն, այն անպատկառ յաւակնութիւնն է որով կ'ուզէ սրամտութեան շպար մը տալ իր գրուածքներուն : Ներելի չէ փողոցներու տակէն վազող կոյուղիի մը՝ դաշտերու մէջ սողացող վտակի մը ձևերը առնել :

Ահա՛ այն խրատը զոր կուտանք է. քսբէր-Սի տի. քին, թէև գուցէ չհասնի մինչև իրեն, քանի որ շաբաթ մեկնած է, Բոր-Սոյիտի ճամբով, դէպի Եւրոպա, ընկերակցութեամբ Կարապետ Մելքոնեանի մը որուն շուքը կը հաւատանք թէ այնքան ազնիւ է որքան Խայտէրի բաստըրման :

Ե. ՕՏԵԱՆ

**ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ**

ԷՍԹ ՈՒՏՍԹԻ

Բարիկ 21 Յունիս 1902

ՄԵՐԱՅԻՆՔ

Այս շաբթու գործակալութեանս հասած՝ մեր ցեղին վերաբերող լուրերն բազմաթիւ են. պատմելու կամ առաջ բերելու համար հետեւինք ժամանակագրական կարգին :

— Լսած կը լինիք արդէն թէ անցեալ շաբաթ օր Փրանսացի մի քանի հայասէր երեսփոխաններ՝ տեղեկանալով Մուշի կողմերէն եկած շարքաստիկ լուրերուն, ներկայացան Փրանսայի Արաաքին գործերու Մի. նիստը՝ Պ. Տէլքասէին եւ խնդրեցին որ Փրանսան միջոցներ ձեռք առնէ կսկծալի եղելութիւններու առաջն

առնելու : Պ. Տէլքասէ այն երեսփոխաններուն խոստացաւ պէտք եղածն ընելու . . . :

— ԿիՊՐՈՍԷՆ գործակալութեանս հասած հեռագիր մը կ'իմացնէ մեզ թէ Հայաստանի Պէս (Պեսնի՞, Բասէ՞ն — անկարելի է իմանալ հեռագրէն) գաւառին մէջ նոշանոր շարգեր և կոտորածներ տեղի ունեցած են, գերակատարներն եղած են Բուրտերը, իսկ շարգուողներն բնականաբար Հայերը : Բայց մանրամասնութիւնները կը պակսին, որովհետև քուրտերը տեղւոյն հեռագրական թելերը շարդ ու փշուր ըրած են եղեր :

— Հինգշաբթի երեկոյ ուրիշ տարօրինակ և զուարճալի հեռագիր մ'ալ հասաւ գործակալութեանս : Մեզ կ'իմացնեն թէ Թուրքիոյ մէջ սուրբի և մարգարէի մեծ համբաւ վայելող շէյխ մը, ապագան գուշակեր է և իւր հեռատեսածը Սուլթանին պատմեր է այսպէս՝ «Թուրքերու բանը վերջացեր է, եւրոպական մի քանի պետութիւններ իրենց մէջ գաղտնի բաժնած են Թուրքիան և այդ բանին երևան ելլելը միայն ժամանակի խնդիր է այժմ . . . » Սուլթանն որ մինչև օրս սկեպտիկ մը կը նկատուէր և կը ծիծալէր շէյխերու և մուլաներու ու անոնց աղօթքներուն և գուշակութիւններուն վրայ, սոյն շէյխի գուշակութիւններէն սաստիկ զգածուած է և երեք օրերէ ի վեր մեծ մտատանջութեան և անհանգըստութեան մէջ և գիշերները չի քնանար իսկ . . . :

— Անցեալ չորեքշաբթի Յունիս 18ի երեկոյեան ժամը 9 1/4 ին Բարիկի Idéal Social կոչուած ընկերութեան աննախանձելի՝ կեդրոնատեղւոյն մէջ Պր. Ա. Չօպանեան, մօտ քսան և հինգ հայ և ֆրանսացի հանդիսականներու առաջ, բանախօսութիւն մը կարդաց Հայոց մասին, որ տեւց մօտաւորապէս կէս ժամ :

\* Ինչո՞ւ . . .

Պր. բանախօսն իրեն նիւթ ընտրեր էր Հայոց բանաստեղծութիւնը, որովհետեւ, ըսաւ, բանաստեղծութեան կը տեսնուի թէ Հայերը արեւելեան ազգ մը լինելովսին հանդերձ՝ իրենց ներշնչումներով և մտաւորական զարգացումով արեւմտեան ժողովուրդ մը կը ներկայացնեն:

Կարգաց մի քանի կտորներ զանազան բանաստեղծներէ, ինչպէս՝ Նալբանտեանէ, Գամառ-Քաթիպայէ և մի քանի աւելի հիներէ: Յետոյ անցաւ Փրանզօ-հայկական յարաբերութեանց և յիշեց թէ ինչպէս ժ.Պ. դարու մէջ ֆրանսացի իշխանազուն մը՝ Լուսինեան Հայոց թագաւոր հռչակուեցաւ: Յետոյ խօսեցաւ համբաւաւոր Իսրայէլ Օրիի մասին որ կուղէր Հայաստանի անկախութիւնը վերահաստատել և ասոր համար դիմեց ֆրանսացի թագաւոր Լուդովիկոս ժ.Պ. ին, որմէ մերժուելով Ռուսիոյ Պետրոս Մեծին դիմեց, որը թէպէտ ընդունեց Օրիի առաջարկը բայց բարեկարգիչ կայսեր միջամտութիւնը չօչափելի հետեւանք մը չունեցաւ:

Յիշեց Մխիթարեանց հաստատուին յերոպոս, անոնց ըրած թարգմանութիւններն երոպական հին և նոր մատենագիրներէն, յիշեց հայկական թատրոնին սկզբնաւորութիւնը Կ.Պոլսոյ մէջ, նոյնպէս թատրոնի մուտքը Թուրքերու մէջ՝ Հայերու շնորհիւ: Խօսեցաւ ֆրանսական մատենագրութեան ազդեցութիւնը հայ գրականութեան վրայ և աւելցուց թէ ուսասհայ մատենագրութիւնն ալ ֆրանսականին ազդեցութենէն զուրկ չէ:

Երեկոյթը սկսաւ ժամը 9 քսան անցած, հանդիսականներու թիւը 30 էն աւելի էր, որոց մէջ կը գտնուէին նաև մի քանի ոչ-ուսանողներ:

Երեկոյթը սկսուեց Ա. Ահարոնեանի «Բաշօն» նորավէպի ընթերցումով, որ կարգաց Պր. Ատուր Շահէն:

Այս նիւթին միակ պակասութիւնն այն էր որ շատ երկար էր, այդպիսի փոքրիկ երեկոյթի մը համար. ընթերցումը տևեց 20 վայրկեանէ աւելի և միաձայն (rectotono) կարդացուելուն՝ եղաւ ժամանակ մը որ ամենուն ձանձրոյթ կը պատճառէր: Բարեբաղդաբար այս ընթերցանութեան յաջորդեց Օրիորդ Բարսեղեան կատարեալ արդիւտ մը որ դաշնակի վրայածեց Եսայի երկու կտորները՝ և վարպետի մը նման կատարեց իւր դերը: Յետոյ Պր. Թէրլէմէզեան հայ նկարիչը շատ յաջող կերպով կարգաց, դաւառացի հանգուցեալ բանաստեղծի մը՝ Ամիրճանեանի մէկ գեղեցիկ կտորը «Պանդուխտը» վերնագրով:

Պր. Փ. Թէրլէմէզեանին յաջորդեց Պր. Ս. Հախումեան որ իւր քառ գործիքով — նուագի գործիք մը որ Պարսկաստանէն եկած է թէպէտ բայց կովկասի մէջ շատ տարածուած է և բաւականին նման է ամբողջ Տաճկաստանի մէջ ծանօթ սազ կոչուած գործիքին — ներկաներուն խելքն ու մտքը քառեցուց, շնորհիւ ածած արեւելեան եղանակներուն, երազներու ծալքերուն վրայ: Ասկէ յետոյ Պր. Ա. Եարճանեան կարգաց Գ. Սրուանձրեանի «համով-հոտովէն» «Միս Մանդոն» անուն, վարպետութի մը գրչին անվայել, կտորը:

Յետոյ խօսք առաւ Ուսանողաց Միութեան արդի Դիւանին Ատենապետը՝ Պ. Մխաթ Պաղսասարեան և բացատրեց ուսանողութեան դերը, թէ ինչ կ'ըսպասուի ուսանողութենէն, թէ ինչու վերստին կալմակերպուած է ուսանողական միութիւնը. թէ ինչ պայմաններով կարելի է անդամակցիլ միութեան, ևն: Յետոյ 10 վայրկեանի չափ դադար:

Երեկոյթի երկրորդ մասն սկսաւ Տ. ԿԱՄՍԱՐՍ.ԿԱՆԻ «Ածուխի տեղ» նորավէպին ընթերցանութեամբ, զոր

կատարեց Պր. Փընտըքլեան: Յետոյ գարձեալ Օրիորդ Բարայեան գաշնակի վրայ ածեց երեք զանազան կտորներ՝ եւրոպական — բայց ինչո՞ւ օրիորդը հայկական մի եղանակ չ'ածեց —: Յետոյ Պր. Հախումեան կարգաց Յ. Յովհաննէսեանի մէկ բանաստեղծութիւնը, որուն անմիջապէս յաջորդեց Պր. Հախումեանի Թատը, և երեկոյթը վերջացաւ մօտ գիշերուան ժամը 12 ին:

Ուսանողները նպատակ ունին 15-20 օրը անգամ մը այսպիսի փոքրիկ երեկոյթներ սարքելու. նպատակնին շատ գովելի է, մանաւանդ եթէ երեկոյթներուն մի քիչ աւելի հետաքրքրական գոյն տան բանախօսութեան, ընթերցանութեան հետ երգեր և կոմիկ կտորներ ալ խառնելով:

ՄԵԼԻՔ Ս. ԴԱԻԹ ԲԷԿ

## ՔՐՈՆԻԿ

ՊՐԻՒՔՍԷԼԻ ԳՕՆԿՐԷՆ. — Բրօ Արմենիան իւր վերջին թիւով հրատարակած է Պ. Անադօր Ֆրանսի հետեւեալ յօդուածը.

«Տանիմարքայի մէջ, Խորհրդարանէն, Համալսարաններէն ու բարձր կղերէն անդամներ, նկատելով հայ ժողովուրդին ըստպառնացող մեծ վտանգը, աստիճանային հաստատել համագործողութիւն մը «գոռօ մարդկային, առանց ֆաղափական հանգամանքի» բոլոր քաղաքակրթեալ ազգերուն միջեւ, ի նպատակ հոգեւարիկ ազգին:

Այս նախաձեռնարկին վրայ, Ապրիլ 5 ին, Բարիզի մէջ, ի ներկայութեան Տ. Տ. Ադիէնի, Մարսէլ Սանպաի, Ժօրժ Պրանսի, Տը Ռօպերթի եւն, միջազգային գումարում մը՝ քուէարկեց հետեւեալ որոշողութիւնը:

«Բոլոր երկիրներուն Հայաստանի քաղաքակրթութեան համաժողովը մը պիտի տեսնուի իր իր կողմէն յարմար եղածին չափ շուտով:»

Հետեւաբար, Եւրոպայի բոլոր երկիրներուն երեւելիները պիտի գումարուին Գօնկրէի, Պրիւքսէլ, յառաջիկայ Յուլիոսին, բարձր ձայնով լսելի ընելու համար այն բողոքները թէ՛ Հայերուն կրած հալածանքները վերջապէս դադարին:

Ժամա՛ ալը կը շտապէ: Զօրանոցներ կը բարձրանան Զեթուն, Սասուն: Կը ծանուցանեն նոր խողարարութիւններ: Բրօ Արմենիան Վանէն կրտսանայ այս նամակը.

Վան, 26 Մարտ 12 Ապրիլ 1902

«Կ'իմանա՞նք թէ բուրժուար կառավարութիւնը կ'աւելցնէ իր զօրքերն ի Սասուն: Կը վախճուի թէ ծանր կորուստներ չ'ունենանք այս ամառ: Պէտք է գործածել բոլոր հարկաւոր միջոցները: Անկէ կերպերով պէտք է միջանկէ մը կառավարութիւնը չը հատարակի գործածել իր բոլոր ուժերը Հայերուն դէմ:

«Երեկ նամակ մ'առիւնք Սասունէն: Մեզի կը գրեն. «Կառավարութիւնը վճարակարէն որոշած է բռնի զաղթեցնել Սասունցիները: Վստահ եմք թէ մեր բարեկամները բան մը պիտի չը խնայեն այս գործին մեջ, առաջին անգամ համար հարստահարութեան ու սարսափին:»

Զարագուշակ ամիսները կը մօտենան: Յուլիոսէն նոյեմբեր է որ երեւան կուգան ջարդերը:

Ինչ որ կը մնայ մարտիրոս ժողովուրդէն՝ չը կրնար ազատիլ եթէ ո՛չ ամեն կուսակցութեան մարդիկներուն միջազգային համաձայնութեամբը: Այս համաձայնութիւնն ապահովուած է:

Ֆրանսա, Տընի Բօշէն ու Ժօրքու. Հոլանտա, Տր. Բուիլքըր ու Վան Բօլ միացած են Հայերը պաշտպանելու համար:

Կոչում կ'ընենք մարդկային սեռը սրտանց սիրող բոլոր մարդոց որ համահարձօրէն մասնակցին Պրիւքսէլի հայասէր Գօնկրէին եւ ստուարացընէն վե՛ ձայները, որոնք պիտի լսելի ընեն եւրոպական կառավարութեանց եւ աշխարհիս քաղաքացիներուն, արդարագոյն բողոքը զոր երբէք ժողովուրդ մ'արձակած ըլլայ երկրիս վրայ:»

Բրօ Արմենիան Տ.Ա.Անդօր Ֆրանսի յօդուածին վրայ կ'աւելցնէ հետեւեալ տողերը.

Հիմակուրէն ընդունած ենք բազմութիւ հաւանութիւններ, նախարարներուն, խորհրդարանաց անդամներու (Դիւանի անդամներ, երեսփոխաններ ու սեկնորներ) Ակադէմիաներէն, գիտնական մարմիններէն ու Համալսարաններէն, խաղաղութեան ու իրաւարարութեան Ընկերութիւններէն, գործաւորաց ընկերակցութիւններէն ու սեկնիֆաներէն, մեծամուկ գրագէտներէն ու արդիւսներէն, ամեն կուսակցութեանց

ամեն կրօններու եւ բոլոր իմաստասիրական դպրոցներուն վերաբերող մարդերէն: Եւրկայացուած ազգերն են. Կերմանիան, Անգլիան, Աւստրո - Հունգարիան, Պէլճիքան, Տանրմարքան, Ֆրանսան, Հօլանտան, Իտալիան, Նորվեգիան, Շուէտն ու Զուիցերիան: Պատասխաններ կ'սպասենք Ամերիկայի Միաց. Նահանգներէն: Թող մեզի ներուի միայն՝ շնորհակալ ըլլալ այսօր Տիկին Պառնունի Պերքս սր Սուրբներէ եւ Տ. Ֆրէսերիֆ Բասիէ, տեղեկական խաղաղութեան երկու անխոնջ ու հոյակապ առաքեալներէն որոնք մեր կոչին պատասխանողներուն առջիններէն եղան:

— ՏՐ. ՔՈՒԻՅԲԸՐ, Ստորին Նահանգներուն նախարարաց Խորհուրդին նախագահը, Յունիս 18 ին չորեքշաբթի ընդունած է իր ներկայութեան Բրօ Արմենիաի խմբագրապետ Տ. Բիեռ Բիլեարը:

— ԹԱՆ լրագրին մուտքը թուրքիոյ մէջ արգելուած է վերջերս Սուլթանին հրամանովը, որուն համակերպած է, առանց ո եւ է գծուարութեան, Կ. Պոլսոյ ֆրանս. դեսպանը Տ. Գօնսրան:

Սակայն լուրջ թերթերը չ'են կրնար «Հայաստան» բառը ջնջել իրենց բառարանէն, ինչպէս նոյնը ստիպուած են ընել Կ. Պօլիս հրատարակող Աննիլեռ Օրիանդայ (Արեւելեան Արեւոյց) ի հիղիւնակները. ասոնք Սվազի նահանգին մարդահամարին մէջ հետեւեալ թուանշանները նշանակած էին.

900,000 Թուրք

288,000 Հայ

1,100 Յոյն ու Հրէայ:

Այդ վիճակացոյցը փոխուեցաւ ու ցեղ կամ լեզու չ'որոշելով, տեղը «քնակչուքիւն» գրուեցաւ: Հայերը, Խալֆային հրամանով, պիտի անհետանան ամեն սպազրութենէ սպասելով որ Համիդի խողխողիչները զանոնք վերջնապէս ջնջեն ողջերուն ցանկէն ու ասիկայ պիտի չ'ուշանայ երկար ատեն, գունդերուն, պաշտօնատարներուն ու բնակչութեան մէկ մասին եռանդագին մրցուններուն շնորհիւ:

— ՀԱՅ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԽՈՒՄԲ մը կազմուեցաւ, ամսոյս 9 ին տեղիս քանի մը ծանօթ զերասաններէ եւ ուրիշ սիրող երիտասարդներէ բաղկացած: Այս նորակազմ խումբը ծրագրած է ամիսն երկու ներկայացում տալ հայերէն ու թուրքերէն, ընտիր թատերախաղեր, խիստ դիւրամատչելի մուտքի ու օթեակի գիններով:

Այժմ շարթուան հասարակ օրերը պիտի կրնան տալ ներկայացումները, թատրոնները վարձուած ըլլալով ուրիշ օտար խումբերէ:

Յաջողութիւն եւ յարատեւութիւն:

— Ս. ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ եկեղեցիներու քիչ օրէն պիտի խնդայ նոր հարսի մը պէտ: Սուրբ խորանները, որմերն ու ձեղունը ներկելու գործողութիւնները փութով առաջ կը տարուին շնորհիւ ամեհօրեայ հըսկողութեան Վսեմ. Արքանամ Պէյ Բարթողի, որուն կրօնասիրութեան ու բարերարութեան հետ պէտք չէ կերէք շփոթել օրէնքով անգոյ Խնամակալութեան մը Փոխ-Ատենապետի հանգամանքը:

Ժողովուրդ մը որ գիտէ գնահատել բարերարներու աննշան ու ամենափոքրիկ ծառայութիւններն անգամ, ո՛րչափ աւելի պիտի սիրէ եւ յարգէ զիրենք եթէ գիտնան իրենց կարգին, սիրել ազգը, յարգել օրէնքը, ու մանաւանդ, եթէ քաջութիւնն ունենան հրաժարելու Խնամակալութենէ սը, որ ժողովուրդին սրտին ցցուած փուշ մ'է:

— ՍԵՅՅԷՏՏԻՆ, Սուլթան Մուրատի 30 տարեկան որդին, որուն բանտարկուելը դիտէինք արդէն, կը լսուի թէ Երլազի բանտին մէջ խեղդամահ ըրած են:

— ՏԷԼԻ ՖՈՒԱՏ ԲԱՇԱՅԻ մասին ալ համանման զրոյցներ կը շրջին: Դամասկոսի ցկեանս կալանաւորը մեռե՛ր է եղեր. սակայն, եթէ եւրոպական թերթերուն հըրատարակութիւնները ստոյգ են, ազատամիտ զինուորականը բանտին մէջ խեղդած կամ թունաւորած են:

— ԵԴՈՒԱՐԴ Է. ի հիւանդութիւնը, որուն հետեւանքով Թագադրութիւնը յետաձգուեցաւ, արագօրէն բժշկուելու վրայ է. անմիջական վրտանդ չ'է մնացած. սպաքինումը քիչ մ'աւելի երկայն պիտի տեւէ:

— Կ. ՊՕԼՍՈՅ մէջ վերջերս ամեն կերպ խստութիւններ ի գործ կը դրուին, ձերբակալումները կը յաճախեն. Լրտեսներուն լէզէտը նորէն տենդոտ գործունէութեան մէջ է:

— ԱՆԿԼԻԱՆ՝ ներկայ պարագաներու մէջ դէշ աչքով պիտի նայէր, կ'ըսէ պուսական հեռագրի մը, ո՛ր եւ է յեղափոխական գործողութեան մը, որ փորձուէր հայ յեղ. կօմիթէներուն կողմէն ի Հայաստան:

### ՆԱՄԱԿ ԳԱՀԻՐԷՆ

Գահիրէ, 20 Յունիս, 1902

Ինչպէս յայտարարում են եգիպտահայ պարբերական թերթերը՝ բացուած է Նշիկ-երէցի, Վասպուրականի իրական կեանքից վերցրած «Գող-Մփո» վերնագիրը կողմ վիպակի բաժանորդագրութիւնը:

Արժանապատիւ հեղինակը, որ ծանօթ է մեր աղքատիկ գրականութեամբ հետաքրքրուող սակաւաթիւ հայ հասարակութեան իւր «ժուռկոճոպամետք» փոքրիկ պոյնտով եւ հայ պարբերական թերթերում (1) լոյս տեսած ուղեգրական, տեղագրական եւ ինչ ինչ յօդուածներով, այս անգամն էլ հրապարակ է գալիս նուիրելու իւր գրական լուծան՝ մեր վիպական-գեղարուեստական աղքատիկ գրականութեան. վիպակից գոյացած զուտ արդիւնքը ամբողջապէս յատկացնելու է հայրենիքի սովատանջ որբերին: Ուրեմն՝ իւր այս ձեռնարկով արժանապատիւ Հայրը կրկնակի նպատակներ է ծառայում. նախ՝ ինչպէս ինքն է ասում, վիպակից գոյացած զուտ արդիւնքով սալ սովատանջ հայ որբերին մի կտոր չոր հաց, որով կարողանան օգտւել, իսկ երկրորդ՝ մեր կարծիքով, լրացնել մեր վիպական-գեղարուեստական գրականութեան այն կարեւոր պակասը, որը անշուշտ զգալի է մեր գրականութեամբ հետաքրքրուողներին:

Երկու նպատակներն էլ մեծ նշանակութիւն ունին մեզ համար եւ արժէ գրանց վրայ մասնաւոր ուշադրութիւն դարձնել. բայց այս յօդուածում տեղը չը լինելով երկար կանգ առնել երկրորդ հարցի վրայ՝ միայն այսքան ենք ասում, որ մեր գեղարուեստական գրականութիւնը շատ աղքատ է այդ տեսակէտից եւ Բաֆֆիներեն հարկաւոր այդ կարիքը մասամբ լրացնելու համար Համբաի Հայաստանում գործ գրած

(1) Արժանապատիւ Հայրը մասնակցե է, թե՛ Արեւելեան եւ թե՛ Արեւելեան հայ պարբերական թերթերին. մասնաւորապէս «Արախ» կիսամեայ հանդիսուն յայտնի է իւր Պարսկաստանից գրած ազգագրական եւ տեղագրական յօդուածներով: Վերջերս պարբերապէս շոյս է տեսնում «Փիւնիկ» շաբաթաթերթում նրա «Պարսկաստան» կրող յօդուածը:

խժղժութիւնները եւ եղբրական գրամաների մանրամասնութիւնները կանհետանան ապագայում, եթէ մի հնուտ գրիչ, մի տաղանդաւոր վիպասան չչտապի ժամանակին արձանագրել այդ բոլորը: Ահարոնեաններ եւ Նշիկ-երէցներ մեզ շատ են հարկաւոր. քաջալերել պէտք է գրանց եւ դա մեր հասկացող գաղափարի, մեր ինտելիգենտիայի պարտականութիւնն է:

Գալով առաջին նպատակին՝ պէտք է ասել, որ բացի իւր բարոյական, կրթական նշանակութիւնից, ունի նաեւ զուտ կենսական նշանակութիւն, որի անհրաժեշտ կարեւորութեան վրայ՝ արժէ մասնաւորապէս «Փիւնիկ» յարկելի ընթերցողներին ուշադրութիւնը հրաւիրել:

Ո՞ւմ յայտնի չէ, որ տօճկական բարբարոս կառավարութեան վայրագ գազանութիւններին զո՞ դարձած մեր հայրենիքը թշուառութիւնների մի վայր է՝ ներկայացնում, որ տասնեակ քաղաքներ եւ հարիւրաւոր շէն դիւղեր աւերակ եւ ընտելութիւնից զուրկ են դարձել, որ հազարաւոր հարուստ ընտանիքներ այժմ չոր հացի են կարօտ եւ որ ամենից ցաւալին է՝ տասնեակ հազարաւոր որբեր զուրկ հայրական եւ մայրական քնքոյշ հոգատարութիւնից, ապրում են օտարի սանն եւ անտարբեր խնամակալութեան տակ: Այս բոլորը իրականութիւն է եւ դառն իրականութիւն. այս դառն իրականութիւնը նոյն իսկ արձագանգ գտաւ հեռաւոր երկրներում: Եւրոպան, հեռաւոր Ամերիկան օդնութեան ձեռք կարկանդակին դժբաղդացած ընտանիքներին եւ սովատանջ հայ որբերին. կազմակերպուեցին զանազան ընկերութիւններ, Տաճկա-Հայաստանի զանազան կողմերում որբանոցներ հաստատեցին՝ հայ որբերին խնամելու համար, քիչ բացառութեամբ, մարդասիրութեան դիմակի տակ՝ իրենց գաղտնի նպատակներն իրագործելով:

Ինչ եւ իցէ, օտարն արած եւ անում է այն, ինչ որ ինքն է ցանկանում եւ ինչ որ իւր շահերին է ձեռնտու. բայց թէ ի՞նչ ենք արել մենք եւ ի՞նչ ենք անելու՞ դա է կարեւորը եւ հետաքրքրականը:

— Օ՞, շատ բան ենք արել՝ դուցէ կը պատասխանեն հայ արիստոկրատը եւ մասնաւորապէս եգիպտահայը. — ապացոյցը — հայ արիստոկրատը իւր չնչին լուծանների հաշիւները, իսկ եգիպտահայը՝ իւր աղքատախնամ եւ որբախնամ ընկերութիւնները:

— այն էլ եօթն (° ° °) — ցուցակն անշուշտ կը ներկայացնի ասելով. — էլ ի՞նչ էք ուզում. խօս մեր բոլոր ունեցածը տալու չե՞նք հայ որբերին, ինչ որ կարողացել ենք, արել ենք: Բայց այդ խօսքերը, ի հարկէ՝ դեռ ապացոյց չեն լինիլ, որ մենք կատարել ենք մեր պարտականութիւնը, որ մենք արել ենք մեր կարողացածը:

Մենք ոչինչ չենք արել, եւ եթէ արել ենք՝ դա շատ չնչին է: Հայ արիստոկրատը իւր սեղանի փշրանքները եւ հայ քաղաքացին իւր չնչին լուծան դեռ չեն դցել հայ որբերի աղքատիկ գանձանակը. էլ ի՞նչ ենք արել: Եթէ մեր պարտականութեան ամենաչնչին մասը նոյն իսկ կատարած լինէինք՝ այժմ հայ որբերը աւելի բարելաւ դրութեան մէջ կապրէին հայ որբանոցներում, աղստ օտարի սառն խնամակալութիւնից եւ այլասեռող դաստիարակութիւնից:

Ինչի՞ցն է մեր այս մեղելային անտարբերութիւնը գէպի թշուառ հայ որբերը, որոնք անցնելով տանջանքի եւ թշուառութեան բովից՝ սպաղաչում հայրենիքի թարմ սերունդն են կապմելու, զի գործեղութեան եռանդով: Դա նրանիցն է, մեր կարծիքով, որ նիւթագաշտական այս դարում ամեն մի վե՛ր զգացմունքը տեղի է տալիս նիւթի, մամոնայի առաջը: Մարդը անզգայ է դարձել, մարդկային ամենաապրափելի թըշուառութիւնները չեն կարող ազգել նրա վրայ:

Ի՞նչ ասած որ հայ արիստոկրատն էլ իւր ժամանակի ծնունդն է եւ կատարելատիպը. նա մարդասէր, ազգասէր, որբերին կարեկցող է մինչեւ այն ժամանակը, երբ խնդիրը լուր խօսքին է վերարկում. իսկ երբ հարցը գալիս է մի փոքրիկ գոհողութեան, նիւթական մի չնչին վնասի՝ հետո՛ւ նրանից. նա այլ եւս այն չէ, ինչ որ առաջ էր. նա ազգասէր չէ: Իսկ մեր տիկիները եւ օրիորդները, ժանեակներն ու ժպաւէններն մէջ կտորաւող այդ տիկնիկները՝ թշուառ որբերի մասին մի որ եւ իցէ հասարակութեան մէջ խօսելիս՝ զեղեցիկ սեռին յատուկ, գէ՛մքին կարեկցական արտայայտութիւն տալով՝ մի քանի կարեկցական բաներ էլ են շարտում, բայց դա էլ մակերևոյթային է. խոր կարեկցական զգացմունքը չէ յուզում նրանց սիրտը: Եւ դժբաղդարար սրանք էլ իրականութիւն են:

Ահա այս է տիրող դրութիւնը մեր բոլոր դասակարգներում եւ այս ցաւալի դրութիւնը արժէ մերկացրած գնել մեր հասարակութեան առաջ, որպէս զի զգած իւր պարտականութիւնը:

Բայց թէ արդեօք ի՞նչ աստիճանի քաջալերութիւն են գտնում մեր հասարակութիւնից բարձր կանգնող այն բացառիկ անհատները, որոնք իրենց կարողութիւնից վեր՝ բարոյական եւ նիւթական աջակցութիւն են ցոյց տալիս ամօքելու թշուառ հայ ընտանիքներին եւ անխնամ որբերի դրութիւնը, դա է հետաքրքրականը. բայց այդ տեսակէտիցն էլ հայ հասարակութիւնը սառն եւ անտարբեր է եւ երեւոյթները անմխիթարական: Այդ անմխիթարական երեւոյթներին են նաև Եգիպտոսի հայ հասարակութեան՝ գէպի «Գող-Մփգո» վիպակի արժանապատիւ հեղինակի բարենրպատակ ձեռնարկը ցոյց տուած անտարբերութիւնը եւ անհետաքրքրութիւնը: (\*)

Արժանապատիւ հայրը, որպէս պահնատես իր հայրենիքի թշուառութիւններին, թէ բարոյապէս եւ թէ նիւթապէս երբէք չէ զլացել աջակցութիւնը՝ իւր թշուառ հայրենակիցներին: Նորա Պարսկաստանում, յօգուտ հայ սոված ընտանիքներին եւ որբերին, գործ գրած աջակցութիւնը եւ եռանդուն գործունէութիւնը, բոլորին էլ յայտնի է, բայց ի հարկէ ոչ Եգիպտոսայեւրին, որոնք, ի հարկէ՝ կարիք էլ չունին հետաքրքրուելու մեր հասարակական կեանքով (?): Արժանապատիւ հայրը, իւր ամիսներին դառն աշխատանքի արդիւնքը, — «Գող-Մփգո» վիպակը այս անգամն էլ հրատարակութեան տալով կամենում է գէթ մասամբ օգնել կարօտ հայ որբերին. բայց եգիպտահայերի գէպի Տ. Հօր այդ բարենրպատակ ձեռնարկը ցոյց տուած անտարբերութիւնը, ինչպէս լսում ենք, — առիթ է տուել, որ արժանապատիւ Հայրը առ ժամանակ յետաձգէ վիպակի մամուլին յանձնելու գործը: 15 անգլ. լիբայի տպագրական ծախսը պահանջող վիպակի համար՝ դեռ հաղիւ 80-90 բաժանորդ է գըրուած, որոնցից գոյացած գումարը՝ ամբողջ ծախսի շատ չնչին մասն է կազմում: Այս երգւոյթը ցաւալի է աւելի այն տեսակէտից, որ Եգիպտոսի հայ հասարակութիւնը

(\*) Այսֆանե աւելին սպասել Եգիպտոսայեան չափազանց կը ցնկեկ: Մ. Խ.

բաց ի բարեխրական՝ զուրկ է նաև կըրթական գործին աջակցելուց:

Ի՞նչ է ցանկանում եզրկտուսի հայ հասարակութիւնը եւ մասնաւորապէս նորա արխատկրատ դասակարգը իւր այս անտարբերութեամբ. արդե՞օք նա չի՞ կարճրի, եթէ զեռ մի երկու ամիս հազիւ պաշտօն ստանձնած պանդուխտ քահանան՝ իւր զրպանից վճարի հրատարակութեան այն ծախսը, որը պարտաւոր է ինքը վճարել, այն էլ ո՛չ ձրի, այլ փոխարէնը գիրք ստանալով:

Եթէ յիրաւի այդ է ցանկանում եզրկտուսի հայ արխատկրատը՝ մենք, որպէս ծանօթ արժանապատիւ Հօր վեհանձնութեան, գրականապէս ասում ենք, որ նա կը վճարի հրատարակութեան ամբողջ ծախսը իւր զրպանից եւ հրատարակել կաայ իւր վիպակը. բայց դա նրա կողմից կը լինի բարոյական մի շող արտակ եզրկտուսի հայ արխատկրատիայի պնդացած երեսներին:

ԱՆՅՈՐԴ

### ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴԵՐ

Փիւնիկը կը ծախուի Աղեքսանդրիոյ մէջ:

ՏԻՍՐ ԲԱՐՍԵՂ ԹԵՂԼԱՆՍԱՆ Ի ՔՈՎ, ՇԵՐԻՓ ԲԱՂԱ ՓՈՂՈՅՐ.  
ՏԻՍՐ ՅՈՎՀՍՆԵՅՄ ՂԱԶՍՐԵԱՆԻ

քով, յեպէն զարագօրէ փողօցը,  
ՏԻՍՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՂԱԶԻԿԵԱՆ Ի ՔՈՎ, ՆՈՐ ԴՍՐ ԿԱՐՆԱՐԱՆԸ.

Բաժանորդագրութեան համար գիմել վերոյիշեալ Պատ. Տեարց, կամ նամակով ՓԻՒՆԻԿԻ հասցէին:

Թերթը մերժողներէն կը խնդրուի որ վրայի պակեթը չը պատռեն, կամ եթէ պատռելէ, թերթը բանալ ու կարգալէ ետքը մերժել ուզեն, դոնէ հաճին իրենց անունը նշանակել ետ պարձուած թերթին պակեթին վրայ, որպէս զի դադրեցընենք առաքումը:

Պատ. Բաժանորդներէն անոնք որ փոխած են իրենց հասցէն, թող հաճին շուտով հաղորդել խմբագրութեանս իրենց նոր հասցէն:

Փիւնիկի գործակալները կըրտանան միշտ 1 օրինակ Փիւնիկ, և իրենց գանձած գումարին 10 0|0ր: Արտասահմանէն Փիւնիկի գործակալութիւնն ստանձնել փափագողները դիմեն մեր հասցէին:

## SALAMANDER

### ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Ապահովագրական Ընկերութիւն ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Իրամագլուխ 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Ծովային, Գետային և Յամաքային փոխագրութեանց արկածներու դէմ.

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակալ եւ Լիսպոն-Փոխանորդ

ՄԻՀԲԱՆ ԳԱԼՖԱՆԱՆ

Աղեքսանդրիա, պոստի Մէնչիէ Ապուսարսա փողոց թիւ 10

## L'ALLIANCE

### Լ'ԱԼԻԱՆՍ

Ծովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Իրամագլուխ 5,000,000 ֆրանկ